

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՇԵՔՍՊԻՐ, Վ. — «ՄԱԿԲԵԹ»: Թարգմանեց Սո. Մալխասեանց: 108 էջ.  
տպարան «Արօր» Տ. Նազարեանի: Գինն է 50 կոպէկ:

Զը գիտեմ, ինչպէս ուրիշները, բայց ես մեծ անհամբերութեամբ սպասում էի Մակրեթի լուս տեսնելուն, մանաւանդ որ գիտէի, որ թարգմանիչը մեր լաւ հավկարանն է, Վերջապէս թարգմանութիւնը լուս տեսաւ Նրը նա ընկաւ ձեռաւ, իմ առաջին գործն էր բաց անել գրքի ամենաընտիր տեղերը և կարդալ գեկլամացիալով, ինչպէս առհասարակ ես սիրում եմ կարդալ ոտանաւորը, Բայց կատարեալ հիասթափումն! Մակրեթը բնագրի մէջ զուրս է գալիս սպանութիւնից կետու սարսափած և դողդով, և նորա արտասանած իւրաքանչիւր բառը սարսափ է և արթնացած խղճի ճիչ: Բայց հակերէն թարգմանութեան մէջ Մակրեթը կարծես. նստել է զատողութիւններ անում, պրօզա!

Մեզ, հալ ընթերցաղներիս, հարկաւոր էր Մակրեթ, որի մէջ կաէ կեանք, Մակրեթ, որի իւրաքանչիւր խօսքը հոգեկան շարժումների ճշդրիտ արտապատութիւն է, Բայց հակերէն Մակրեթը—Մակրեթի ստերն է միան, ևս հաւատացած եմ, որ ընթերցողը, նույն իսկ Շեքսպիրի երկրպագան, չէ կարող կարդալ պ. Մալխասեանի ալս թարգմանութիւնը ան հետաքրքրութեամբ և ան հաճութեամբ, որպէս նա պէտք է կարդակ ալս հրաշալի տրաքեղիան, գեղարւեստական տեսակէտից՝ Շեքսպիրի ամենամնծ գործը:

Ի հարկէ, խիստ զժւար բան է բառացի թարգմանել մի որ և է զասական հեղինակի գործը, ան էլ անպիսի լեզուվ, որ բաւականին ենուու է բնագրի լեզուից և իւր զարգացման դեռ ևս առաջին աստիճանների վերալ, խիստ զժւար է, ասում եմ, բառացի թարգմանել և պահպանել բնագրի ոգին, Բայց ալսնեղ մասամբ մեղաւոր է և ինքը թարգմանիչը:

Շեքսպիրի գործերը բառացի կերպով թարգմանել է ռուսերէն կետը, Բայց ահա ինչ կարծիք է լավտնում գորա մասին ռուսաց լաւագոյն

Ենքսպիրագիւրը<sup>1)</sup>. «Переводъ Кетчера весьма близокъ къ подлиннику и мѣстами хорошъ, но за то мѣстами дубовать и неуклюжъ». Цыпъ є аպостолъ, пр. Կետչերի թարգմանութիւնները ակնքան չեն կարգացւում, Կետչերը չը կարողացաւ բաւականութիւն տալ ընթերցող հասաւ. բակութեանը. Հասարակութիւնը պահանջում էր Ենքսպիրի ոգին, ոչ թէ Ենքսպիրի բառերը. Ազգպիսի նպատակ հն դնում իրանց առաջին անուննեան շատ ուսում թարգմանիչներ (Кронебергъ, Дружининъ, Юрьевъ, Соколовскій и азъ), Կրօներերզի «Մակրեթը», թէպէտ և բաւականին հեռացել է բնագրից, կարողացել է պահպանել բնագրի ոգին և արտաքատել նորա տպաւորութիւնը, Բելինակին նորա թարգմանութեան մասին լայնում է թէ «его переводъ вѣренъ и духу и изящности подлинника, исполненъ, въ одно и то же время, и энергіи и легкости выраженія». Оւրեմն ինչպէս պէտք է վարէւր հաւ թարգմանիչը Ենքսպիրի հաւ Ըստ կարելովն նա պիտի հաւատարիմ մեար բնագրին, բայց աւելի ևս պիտի աշխատէր արտաքատելու բնագրի ոգին և ոչ մի կերպով չը պէտք է զո՞ւ բերէր լեզվի պարզութիւնը և թեթեւութիւնը որ և է զիտումների, հենց միայն աճն պատճառով, որ հակառակ մտքով կատարած թարգմանութիւնը իւր նպատակին չէ կարող ծառակել.

Խ՞նչն է խանգարում պ. Մալխասեանի թարգմանութեանը բնագրի տպաւորութիւնը զործելու Պատճառներ շատ կան, ևս կ'աշխատում մէջ տեղ բերել ալդ պատճառները, ինչպէս ևս հասկացել ևմ.

1) Լ. ե զ ւ ի խոր թռւթիւններ, որոնք կամ զժւար հասկանալի կամ բոլորովին անհասկանալի, են դարձնում դարձւածները. Օրինակ, բնագրի ալս տողը.

### ...Macbeth

Is ripe for shaking... (Արար. IV, տես. III).

Պ. Մալխասեանը թարգմանել է —

### ...Մակրեթ

Արդէն հասուն է, որ ցունց արւի...

Միտքը աճն է, թէ Մակրեթը հասել է անկրման, (կամ—տապարելու համար) ինչպէս թարգմանել է Կրօներերզը.

### Макбетъ

Созрѣлъ для гибели.

Կամ, օրինակ, Մակրեթը բնագրի մէջ ասում է սպանութիւնից լետու:

To know my deed,—t were best not know myself (Արար. II, տես. II).

Հակերէնի մէջ՝

իմ զործերիս ճանաչնամեն, Ուր էր ինքս ինձ չը ճանչէի,

<sup>1)</sup> Стороженко.

Ալո ինչ գործեր են, Մակրեթը խօսում է իւր մի գործի մասին (deed). աղք գործը Դունկանի սպանութիւնն է, ինչու ուրիմն գործեր և ոչ գործ Վեր. ջապէս դժւար հասկանալի, խորթ հակերէն է ասել զործերիս ճանաչնման նթէ պ. Մալխասեանը այնքան թանկ է գնահատում բառացի թարգմանութիւնը, աւելի հաւատարիմ կը մնար ընազրին և աւելի դիւրըմբոնելի հալի համար, եթէ հէնց բառացի էլ թարգմանէր ալս տեղը—ճանաչնմիմ գործը (արածը), ամելի լաւ է ինքս ինձ չը ճանաչեմու.

2) Սխալ թարգմանութիւնն եր, որոնք երբեմն աշքի են ընկնում, Օրինակ, երբ Մակրեթը խնջուքի տեսարանում ասում է իւր կնոջ, թէ նա այնքան արի է,

...Որ կարող է նաև այն

Բանին վերան, որից դեն էլ կը սարսափի,  
Լիդի Մակրեթը պատասխանում է,

Ի՞նչ ապրանք:

Սոքա միան երևովներ են, ձեր վախից առաջացած,

Այս ինչ ապրանքի մասին է խօսում պ. Մալխասեանը: Առանց ծիծաղի ես չեմ կարողանում կարդալ ալս բառերը—ինչ ապրանք Շեքսպիրը արդարիսի ծիծաղաշարժ բան չէ ասում: Ահա ընազրի ասածը.

O proper stuff!

This is the very painling of your fear (Ար. III. տես IV).

Երմի պ. Մալխասեանը որոնել է բառարանի մէջ «stuff» բառի նշանակութիւնը և կանգ է առել առաջին մնանութիւնների վերալ—ապրանք, գոլութիւն... բայց եթէ նա փոքր ինչ ուշաղիր լինէր, նա կը գտնէր «stuff» բառի այն նշանակութիւնը, որ հարկաւոր էր վերովշեալ կիսատողը թարգմանելու համար: Stuff նշանակում է և ճրանք, պստակ, վածորք (fistress, drogue). Ուրեմն ուսաբերէն կը թարգմանէինք—պստակ! Կամ չիստայ վածորք! Խակ հակերէն—սղատարկ բաններ! Ագրակի երևովներ միան քո վախիցդ են առաջ գալիսու:

Ահա մի ուրիշ օրինակ: Տրագեդիակի առաջին տեսարանում վհակները միասին արտասանում են հետեւալ հանելովկը...

Fair is foul, and foul is fair

որ պ. Մալխասեանը թարգմանել է ապակէս.

Բարին է չար, չարն է բարի.

Յետու, երբ Մակրեթը երեսում է առաջին անգամ, զրեթէ միանոնք բառերով նա արտապատում է այն միտքը, որ պարունակւում է վհոկների հանելովկի մէջ, և հանելովկը պարզւում է. Մենք այն ժամանակ խմանում ենք, որ թէ վհովների թէ Մակրեթի խօսքը տարօրինակ օրւակ մասին է. Ահա Մակրեթի ասածը,

So foul and fair a day I have not seen (Ար. I, տես. III).

Ալա տողը պ. Մալիսասնանը թարգմանել է ալսովէս.

Ալսովէս տիսուր և գեղեցիկ օր չեմ տեսել ես երբէք.

Ուրիմն «fair and foul» մի տեղում թարգմանւած է սրարի և չարո, իսկ միւս տեղում միենոյն ալդ բառերը թարգմանւած են «գեղեցիկ և տիսուրո». Միթէ սա նշանակում է հաւասարիմ մնալ բնագրին, Շեքսպիրը դիմամբ կրկնել է տալիս Մակբեթին ան բառերը, որ ասել են վհովեները, որտինան նա կամեցել է հէնց առաջին անգամից ցոլց տալ, որ կալ մի ինչ որ ընդհանուր բան Մակբեթի հոգու և վհովեների մէջ, «Նկատեցէք, ասում է անզիմացի մի բախնի Շեքսպիրագէտ<sup>1)</sup>», որ պիեսավառաջին անսարանում արտասանած վհովեների վերջին բառերը՝ առաջին բառերն են, որ արտասանում է ինքը Մակբեթը. Ալսովէս Շեքսպիրը ցոլց է տալիս, որ, թէպէտ Մակբեթը դու չէ տեսել այս պառաներին, բաց արդէն կապ է սահղեւել նորա հոգու և նոյցա մէջու. Ուրիմն վհովեների խօսքերը աւելի ճիշտ կը վհնէր թարգմանել ալսովէս.

Գեղեցիկը տիսուր է, տիսուրը գեղեցիկ:

Մակբեթի խօսքերը միենում են այս հանելուկը՝

Ալսովէս տիսուր և գեղեցիկ օր չեմ տեսել ես երբէք,

Կրոնեբերգը, թէպէտ շատ աղատ է թարգմանել այս տեղը, բաց նա պահպանել է ան կաղը, որ արտակարուում է վհովեների և Մակբեթի արտասանած միենոյն բառերով:

Всѣ (вѣдьмы).

Гроза гремитъ  
Безъ черныхъ тучъ,  
На небесахъ  
Играетъ лучъ.  
Макбетъ.

Какъ страненъ день; гроза безъ тучъ,  
На небесахъ играетъ лучъ.

3) Բ ա ռ ե ր ի ս խ ա լ դ ա ս ա ւ ո ւ ր ո ւ թ ի ւ ն ը, Բնագրի տպատրութիմը գործելու համար երբեմն բաւական չէ բառերը. թարգմանաբար շարել իրար ետեից. հարկաւոր է իմանալ իրաքանչիւր բառի տեղը, պէտք է իմանալ, թէ որ բառի վերակ է արամաբանական (մաքի) շեշտը բնագրի մէջ, և նոյն շեշտը պահպանել և թարգմանութեան մէջ.

Օրինակ, Մակբեթը վարանման մէջ ասում է Դունկանի մասին, թէ թաղաւորը նորա տանը կրկնակի է պաշտպանւած, ինչպէս նա ձեռք բարձրացնէ նորա վերակ. Բնագրի մէջ շեշտը կրկնակի բառի վերակ է.

...He's here in double trust (Արար. I, տես. VII).

<sup>1)</sup> Դունկան.

որ ալ, Մալխասնան թարգմանել է ալսպէս.

Ալստեղ պաշտպանւած է նա կրկնակի:

Ակս տողը աւելի ոլժ կը ստանար, եթէ թարգմանւէր ալսպէս.

Նա ալստեղ կրկնակի է պաշտպանւած:

Կամ օրինակ հետեւել տեղը,

Դու, Մակդուֆ մեղապարտ,

Նոքա բոլորն ստանւեցան քեզ համար...

Ալստեղ արամաբանական շեշտը պէտք է լինէր ոչ թէ Մակդուֆ, այլ մեղա արտ բառի վերակ. ինչպէս և բնագրի մէջ է:

Sinsful Macduff,

They were all struck for thee! (Արար. IV, տես. III).

Առաջին կիսատողը աւելի ոլժ կը ստանար, եթէ թարգմանւէր ալսպէս.

Դու, մեղապարտ Մակդուֆ...

Կամ մի ուրիշ օրինակ.

Չարկ, զարթեցրու Դունկանին.

Տրամաբանական շեշտը բնագրում Դունկան բառի վերակ է, ոչ թէ զարթեցրու բառի վերակ.

Wake Duncan with thy knocking (Արար. II, տես. II).

Ակս տողը աւելի ոլժ կը ստանար, եթէ թարգմանւէր ալսպէս.

Դունկանին զարթեցրու ագդ զարկով.

4) Հոգեքանական նրբութիւններ արտաքակտելու անկարողութիւնն.

Վերցնենք, օրինակ, Լեզի Մակբեթի նշանաւոր մնախօսութիւնը (The raven himself is hoarse). Ինչպիսի եռանդ, ոլժ և կրակ է երևում ալտեղ, Նախաղասութիւնները հետեւում են իրար ետեից, ինչպէս կակակ-ները փոթորկի յամին, արագ և ուժեղ կրկնուղ բառերը աւելի ևս մեծացնում են տպաւորութիւնը (com-, come, hold, hold). Ակս կտորի հակերէն թարգմանութեան մէջ բնագրի տպաւորութիւնը կորչում է չնորհիւ ան բանի, որ լ. Մակբեթի մնախօսութիւնը ստանում է դասողաւթեան ձև, և առղերը երբեմն դառնում են շատ դանդաղ և անճոռնի:

The raven himself is hoarse,

That croaks the fatal entrance of Duncan

Under my battlements. Come, come, you spirits,

Stop up the access and passage to remorse,

That no compunctions visitings of nature

Shake my fell purpose, nor keep peace between

The effect, and it! (Արար. I, տես. V).

Ահա ինչպէս է թարգմանել ալս տեղը պ. Մալխասնանը.

Ագռաւն աշտարակին վրակ ախչափ  
Կըոկըռաց թագաւորի օրհասական գալուստի.  
Մասին, որ ձախը կըտրւեց, նկէք դուք, ոգիներ,  
\* \* \* \* \*  
Խըղճմըտանքի աւեն անցք ու ճանապարհ փակեցէք.  
Որպէս զի բընութեան կարեկցութեան ալցելութիւնն  
իմ սոսկալի ձեռնարկութիւնս չ'արգելէ, և հաշութիւնն  
Զը խառնըւի նորա մէջ,

Ես զարմանում եմ, ծշմարիս. Միթէ ալս թիւները և թեաները  
չեն ծակում պ. Մալխասնանի ականջները, որ նա ալսքան անխնակարար  
շարել է նոցա իրար ետելից. Դոնէ, եթէ ոչ իրան, ընթերցողին թաղ  
խնալէր. Այս ինչի է նման—«բնութեան, կարեկցութեան, ալցելութիւնն,  
ձեռնարկութիւնս, հաշութիւն»... Ինձ թում է, բնազրի տպաւորու-  
թիւնը զործելու համար, աւելի լաւ կը լինէր ալս տողերը թարգմանել  
ախչափս.

Ագռաւի ձախն էլ կըտրւեց,  
Ալնքան կըոկըռաց պարսպի վերակ  
Նա թագաւորի գալըստեան մասին.  
Նկէք, եկէք, ոգիներո...  
Փակեցէք խղճիս անցք ու ճանապարհն,  
Որ ինձ չ'ալցելէ բընութեան զութը  
Եւ զը խանգարէ իմ սարսափելի  
Զեռնարկութիւնը...

Կամ մի ուրիշ օրինակ, Երբ Մակրեթը, Դունկանին սպանելուց վե-  
տոյ, սարսափած իւր կնոջ մօտ է գալիս, ախ ժամանակ նորա խօսքերից  
երեսում է, որ նա լսում էր մի ձախն, որ գոչում էր (a voice cry). «Էլ մի  
քնչք» և ալն, Որովհետեւ չը կար մէկը, որ գոչում էր; ալլ ախ ձախը  
նորա սարսափի արդիւնքն է, ալդ պատճառով ալս տեղը թարգմանելիս  
հարկաւոր էր հաւատարիմ միաւ բնազրին, Բնազրի մէջ ասւած է,

Methought, I heard a voice cry... (Արար. Ռ. տես. Ռ).

Որ պ. Մալխասնան թարգմանել է՝

Կարծես լըսում էի, որ գոչում էր մէկն...

Փոխանակ թարգմանելու՝

Կարծես լըսում էի մի ձախն, որ գոչում էր...

Կրոներերդը ալս տեղը թարգմանել է ախչափս, որ գործում է բնազրի  
տպաւորութիւնը.

Я слышалъ,

Раздался страшный в опль...

Յետով այն սպառնալիքը, որով այն ձարնը հնչում է Մակրեթի ական-  
ջին, պէտք է անփոփոխ մնար թարգմանութեան մէջ, ինչպէս նա ան-  
փոփոխ է բնագրի մէջ։ Ալպիսով աւելի ևս մեծանում է խորհրդաւոր  
սարսափը և աւելի ևս տեղաթիւն է ստանում նա.

## Cawdor

Shall sleep no more, Macbeth shall sleep no more! (ibid).

Պ. Մալխասեան թարգմանել է.

## Կաւզորն

Ալ ևս պիտի չքնի, Մակրեթն ալ ևս չըքնի.

Ալմանդ ոչքնելո բառը պէտք է ովտ ստանար, և դորան աւելի ովտ կը տար  
սչը պէտք էւն քան թէ ոչը պիտիոն, Եւ ալդ ոչը պէտքէոն պիտի կրկնէր  
երկու նախադասութեան մէջ էլ անփոփոխ Ալպիսով մնեք կը ստանանք.

Ալ ևս չը պէտք է քնէ, Մակրեթն ալ ևս չը պէտք է քնէ,

«Միշտը» միշտ բանաստեղծական չէ լինում, Երբեմն նա տպեղաց-  
նում է բանը, Փոխանակ թարգմանելու որոլոր տան մէջ նա զոչում է  
միշտ, ես կը գերադասէի թարգմանել—որոլոր տան մէջ նա զոչում է  
անդադար».

5) «Հայկական կոչւած տաղաչափութիւնը, Բայց առաջ  
տեսնենք թէ ինչու թարգմանիչը գերադասել է այս չափը սամփորական  
դարձած տասնութեան չափից», «Մակրեթը, ասում է պ. Մալխասեանը,  
մնեք փորձեցինք թարգմանել հավկական տաղաչափութեամբ, փոխանակ  
սովորական դարձած տասնութեան չափին, Հավկական տաղաչափութիւնը  
բացի ան, որ զերծ է տասնութեանի ձանձրալի միօրինակութիւնից, բացի  
ան, որ միջոց է տավիս, շեշտւած վանկերն երկար կարդալով իմաստը կին-  
դանի և բնական առողջանութեամբ արտասանելու՝ մի անհամեմատ առա-  
մելութիւն ևս ունի, որ իւր 12—16 վանկերում ընդունակ է տեղաւորե-  
լու բնագրի տողը։ Եւ վիրաւի, մեր թարգմանութեան մէջ բնագրի մի  
տողը տեղաւորւած է մի տողում, և կարծեմ ամբողջ թարգմանութեան տր-  
դիւը հաւասար է բնագրի տողերին».

Ինձ շատ զարմացնում է մի բան, ինչու մեր թարգմանիչը կամեցել  
է, որ արճագրի մի տողը տեղաւորւած լինի թարգմանութեան մի տողում։  
և ինչու «ամբողջ թարգմանութեան տողերի թիւը հաւասար լինի բնագրի  
տողերի թիւնո», Արդեօք քաջութիւն է համարել այս բանը պ. Մալխա-  
սեանը, թէ կարծել է, որ ալպիսով բնագրի ոգին պահպան ած կը լինի,—  
չէ հասկացում, Ես կարծում եմ, ինձ հետ կը կրկնէ ամեն մի մարդ, ով  
ուզում է ճանաչել նեքսպիրին։ մնդ տւէք Նեքսպիրի ոգին, ոչ թէ նորա  
բառերը և տողորի թիւը!

Մի ուրիշ բան էլ է ինձ զարմացնում։ Ի՞նչ է տեսել պ. Մալխա-  
սեանը «հավկական» տաղաչափութեան մէջ, որ նա ակնքան դրաւած խօ

առւմ է նորա մասին։ Առաջնը՝ եթէ «հավկական» տաղաչափութիւնը ունի մի որ և իցէ արժանաւորութիւն, նա աւելի կը սպէքը վիպական բանատուզծութեան, որի բնաւորութիւնը աւելի ծանր է և հանգարա, ոչ թէ դրամալին, որտեղ գործողութեան արագութեան հետ պէտք է կապւած լինի և խօսքի արագութիւն և եռանդ։

Բայց գաճք բուն խնդրին, «Հավկական» կոչւած տաղաչափութիւնը — այս գրանցուած աշխատավորութեանը տաղաչափութիւնը, որին սիրում են տալ անձունի (այս աշխատավորութեանը ածականը, փառք է մեր հավկական տաղաչափութեան հետ համեմատած, Ասեւ թէ «հավկական» տաղաչափութեան մէջ կալ մի որ և իցէ գեղեցկութիւնը առանապարակ, «Հավկական» տաղաչափութիւնը քիչ է զանաղանում պրոդալից։ Դա գրեթէ նոյն պրոզան է, Տաղաչափութեան ովին, գեղեցկութիւնը կալանում է նորա մէջ, որին լոյները ասում էին — հու ի թմու, ակսինքն որոշ հնչիւնների պարբերական կրկնութիւնը մի որոշ ժամանակամիջոցում։ Տաղաչափութեան հիմքը — ընութեան մէջ պէտք է որոնել, Սրբ ձին արագ գալում է, այն ժամանակ պարբերաբար կրկնում է երեք տրոփիւն, և երրորդ արոփիւնը միշտ աւելի ուժեղ։ Ստացում է մօտաւորապէս մի ալսպիսի բան՝ տակ-տակ-տակ, տակ-տակ-տակ և ալլն, Սթէ ձիու արագ գնացքը վերածելու լինենք տաղաչափութեան կանոններին, մենք կը ստանանք — ան ալ ես առ (—+—+—+—+—)։

Բնութեան բոլոր հոփիմական հնչիւնների մէջ կարելի է գտնել տաղաչափութեան բոլոր տեսակները, Առնենք բնութիւնից մի ուրիշ օրինակ։ Ուղտերի զնալու ժամանակ, նոցա զանգակները հանում են շատ աններդաշնակ ձախներ, պատճառը այն է, որ հոփիմոսը բացակալում է նոցա մէջ, իմ խօսքը, ի հարկէ, երաժշտական եղանակների (τον) մասին չէ, ալ հնչիւնների մասին առհասարակ, Երաժշտութիւնը կարող է գեղեցիկ լինել և առանց հոփիմոսի, բայց տաղաչափութիւնը — երբէք, Ակն տաղաչափութիւնը, որի մէջ չկալ հոփիմոս, տեղը է, Ակն լեզուները, որոնք ընդունակ են հարուստ հոփիմոս կազմելու, ունին հարուստ և գեղեցիկ տաղաչափութիւն (լոները, հոռվմակեցիք, գերմանական ազգերը), Ակն լեզուները, որոնք ընդունակ չեն հարուստ հոփիմոս կազմելու, չունին գեղեցիկ տաղաչափութիւն (լեհացիք, ունանական ազգերը), Հակերէնք մէջ տեղն է բոնում Հալոց լեզուն, չնորհիւ իւր մի քանի առանձնալաբութիւնների, կարող է ձգտել հոփիմական տաղաչափութեան։ Աս զիտեմ հակերէն ստանաւորներ, որոնց մէջ սկզբից մինչև վերջ պահպանած է հոփիմոսը։

«Հավկական» տաղաչափութեան մէջ չկալ հոփիմոս, Սթէ կաէ էլ, ամեն մի քալում խախտում է, աՇեշտած վանկերն երկար կարդալով մենք շատ քիչ բան ենք վաստակում։

Ես կը բերեմ պ. Մալխասեանի թարգմանութիւնից մի քանի օրինակ ցոլց տալու համար, որ այն տողերն են գողտրիկ և սահուն, որտեղ կաէ հովիթմոս, և այն տողերն են տղեղ և պրոզական, որտեղ չ'կաէ հովիթմոս:

Դու մի լսիր այն Դունկան, մահահրաւէր կոշնակ է այն... (1)

Որ քեզ համար բաց է անում կամ երկինք կամ դժոխք... (2).

Առաջին տողը—հրաշալի է, Նամբերը (Ս-Լ) հետեւամ են իրար ետեից գեղեցիկ ներդաշն ակութեամբ, իսկ երկրորդ տողի բոլոր ոտներն էլ կաղում են, և տաղում է մի անձունի բան, որ դժւար է լինում կարդալ (Ս-Լ-Ս-Լ-Ս-Լ-Ս-Լ), Ես գիտեմ ինչպէս կ'առաջարկէր արտասանել ալսպիսի մի տող պ. Մալխասեանը. բայց այդ մասին քիչ կետով:

Կամ օրինակ:

Նթէ ես ալս օրհասից || մի ժամ առաջ մեռնէի... (1)

Երջանիկ կը լինէի ապրած. ալլ ես ալսունետե... (2).

Առաջին տողը գեղեցիկ է, և տաղաչափութեան ձևերով կարելի է նշանակել ալսպէս:

Ս-Լ-Ս-Լ-Ս-Լ || Ս-Լ-Ս-Լ-Ս-Լ

Երկրորդ տողը տղեղ է, և տաղաչափութեան ձևերով կը նշանակենք ալսպէս.

Ս-Լ-Ս-Լ-Ս-Լ || Ս-Լ-Ս-Լ-Ս-Լ

Երկրորդ տողը հնչում է, ինչպէս աններդաշնակ դօղանջիւն, ինչպէս նետրօնին ազուրի անունը, ըստ ոռու բանաստեղծի: Բայց պ. Մալխասեանը կարող է նկատել ինձ թէ ինչու սխալ եմ կարգում երկրորդ տողը. չէ՞ որ տողի մէջ չորս շեշտ, չորս անդամ պէտք է լինի միան. իսկ անսպէս, ինչպէս ես եմ կարդում, զուրա է գալիս հինգ շեշտ, հինգ անդամ: Ես կը պատասխանեմ. եթէ արտասանենք ալս երկրորդ տողը անսպէս, ինչպէս կը պահանջէր պ. Մալխասեանը, զուրս կը գաէ ալսպէս:

Երջանիկ կը լինէի || ապրած. ալլ ես ալսունետե.

Աս դէպքումն էլ տողի իմաստը «կենդանի» և բնական առողջութեամբ արտասանած» չենք լինիլ: Թող ուրեմն պ. Մալխասեանը մեղ չը հաւատացնէ, որ հակական տաղաչափութիւնը «միջոց է տալիս, շեշտ. ած վանկերը երկար կարդալով, իմաստը կենդանի և բնական առողջանութեամբ արտասանելո»:

Երանի թէ պ. Մալխասեանը «Մակրեթի» համար գործածէր այն տաղաչափութիւնը, որով նա թարգմանել է «լիր թագաւորը». երանի նա չը գերազաէր «հակական» կոչւած տաղաչափութիւնը այն տաղաչափութիւնից, որով զրել են իրանց անմահ տրագեդիաները Մառլօ, Շեքսպիր, Շիլեր, Պուշկին և այլն:

ի վերջով, իմ կարծիքը պ. Մալխասնանի թարգմանութեան մասին հստեղալն է. նորա «Մակրեթը» գրեթէ բառացի թարգմանութիւն է, որ դուցէ օգտաւէտ լինի հայ գիտնականի համար Սական, թէպէտն պատահում են զեղեցիկ, ընտիր կտորներ, բնագրի ոգին չէ պահպանւած: Սորա պատճառը մասամբ մեր արդի գրական լեզվի թերութիւններն են: Միա կողմից՝ մեղատր է և ինքը թարգմանիչը: Նորա թերութիւններն են—ծանր և մութ լեզուն և լեզվի խորթութիւնները, երբեմն սխալ թարգմանութիւնները, բառերի անճիշտ դասաւորութիւնը, հոգեբանական նրբութիւններ արտակարսելու անկարողութիւն և վերջապէս հոչակաւոր հակական տաղաչափութիւնը:

Սական ես շարունակում եմ լուսեր տածել նորա մասին: Միայն մի բան ես սրտանց ցանկանում եմ՝ մեծ գործերի թարգմանութեան ձեռնարկելու՝ նա միան մի բան աչքի առաջ ունենալ. այն է՝ տալ հասարակութեան ձեռքը բնագրի ոգին, բնագրի ոգին, և ուրիշ—ոչինչ!

Լ. ՄԱՆՈՒԵԼԱՆ.